

ԿԱՆՈՒՅՆ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE

DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE

ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF

ST. GREGORY THE ILLUMINATOR

ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈԿՏԵՄԲԵՐ 2018

Դ. Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին / ԹԻԻ 79

Dimanche 7 octobre 2018

4ème Dimanche après la Sainte Croix / NO. 79

Today's Bible Readings:

2 Corinthians 13.5-13 / Mark 11.27-33 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

2 Corinthiens 13.5-13 | Marc 11.27-33 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Յոգեւոր Յովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Office Matines à 9 :30 - Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

La Sainte Messe à 10:30 – Ս. Պատարագ Ժամը 10:30-ին

Office de Requieme à Midi – Յոգեախնայան Պաշտօն կ'եսօրին

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian,


Dn. Norayr Grigoryan, Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2


stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca




Յին Ջուլայի Խաչքար, 1602 թուի, գործ՝ Գրիգորի, Ներկայիս Էջմիածնի բակին մէջ:

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS



2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 13.5-13

5 Փորձեցէ՛ք դուք ձեզ՝ թէ հաւատքին մէջն էք. քննեցէ՛ք դուք ձեզ: Չէ՛ք գիտեր դուք ձեզմէ՝ թէ Յիսուս Քրիստոս ձեր մէջն է, եթէ խոտելի չըլլաք: **6** Բայց կը յուսամ թէ պիտի գիտնաք՝ թէ մենք խոտելի չենք: **7** Կ'աղօթեմ Աստուծոյ՝ որ դուք ո՛չ մէկ չարիք ընէք. ո՛չ թէ՝ որպէսզի մենք գնահատելի երեւինք, հապա՛ որպէսզի դուք ընէք ինչ որ պարկեշտ է, թէեւ մենք խոտելի թուինք: **8** Որովհետեւ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, հապա՛ ճշմարտութեան համար: **9** Քանի որ կ'ուրախանանք՝ երբ մենք տկար ենք, իսկ դուք՝ զօրաւոր էք. սա՛ր կ'ըղձանք նաեւ - ձեր կատարելութիւնը: **10** Ուստի կը գրեմ ձեզի այս բաները՝ բացակայ ըլլալով, որպէսզի երբ ներկայ ըլլամ՝ սաստկութեամբ չվարուիմ այն իրաւասութեան համեմատ, որ Տէրը տուաւ ինծի՝ շինելու, եւ ո՛չ թէ քանդելու համար:

11 Վերջապէս, եղբայրներ՝, ո՛րչ եղէք: Կատարեա՛լ եղէք, լա՛ւ մխիթարուեցէք, միաբա՛ն եղէք, խաղաղութեամբ ապրեցէք. եւ սիրոյ ու խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ: **12** Բարեւեցէ՛ք զիրար սուրբ համբոյրով. բոլոր սուրբերը կը բարեւեն ձեզ: **13** Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը ձեր բոլորին հետ: Ամէն

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 11.27-33

27 Դարձեալ եկան Երուսաղէմ: Երբ կը քալեր տաճարին մէջ, քահանայապետները, դպիրներն ու երեցները եկան անոր, **28** եւ ըսին. «Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները. ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը՝ որ ընես այդ բաները»: **29** Յիսուս պատասխանեց անոնց. «Ես ալ ձեզի՛ հարցնեմ բան մը. պատասխանեցէ՛ք ինծի, ու ես պիտի ըսեմ ձեզի թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները: **30** «Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՛ն էր՝ թէ մարդոցմէ՛»: Պատասխանեցէ՛ք ինծի»: **31** Անոնք կը մտածէին իրենց մէջ՝ ըսելով. «Եթէ պատասխանենք. “Երկինքէն”, պիտի ըսէ. “Հապա ինչո՞ւ չհաւատացիք անոր”: **32** Իսկ եթէ պատասխանենք. “Մարդոցմէ”բ »: Կը

վախնային ժողովուրդէն, որովհետեւ բոլորը իրապէս մարգարէ կը նկատէին՝ Յովհաննէսը: **33**Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք գիտեր»: Յիսուս ալ պատասխանեց անոնց. «Ես ալ չեմ ըսեր ձեզի թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այդ բաները»:

2 Corinthians 13:5 -13

5 Examine yourselves, whether ye be in the faith; prove your own selves. Know ye not your own selves, how that Jesus Christ is in you, except ye be reprobates?

6 But I trust that ye shall know that we are not reprobates. **7** Now I pray to God that ye do no evil; not that we should appear approved, but that ye should do that which is honest, though we be as reprobates. **8** For we can do nothing against the truth, but for the truth. **9** For we are glad, when we are weak, and ye are strong: and this also we wish, even your perfection.

10 Therefore I write these things being absent, lest being present I should use sharpness, according to the power which the Lord hath given me to edification, and not to destruction.

11 Finally, brethren, farewell. Be perfect, be of good comfort, be of one mind, live in peace; and the God of love and peace shall be with you. **12** Greet one another with an holy kiss. **13** All the saints salute you.

Mark 11.27-33

27 And they come again to Jerusalem: and as he was walking in the temple, there come to him the chief priests, and the scribes, and the elders,

28 And say unto him, By what authority doesnt thou these things? and who gave thee this authority to do these things? **29** And Jesus answered and said unto them, I will also ask of you one question, and answer me, and I will tell you by what authority I do these things.

30 The baptism of John, was it from heaven, or of men? answer me. **31** And they reasoned with themselves, saying, If we shall say, From heaven; he will say, Why then did ye not believe him?

32 But if we shall say, Of men; they feared the people: for all men counted John, that he was a prophet indeed. **33** And they answered and said unto Jesus, We cannot tell. And Jesus answering said unto them, Neither do I tell you by what authority I do these things.





Հոգեւոր Հովիւի Օրուան Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ , Ամէն :

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

(Առակաց 1:2)

Սիրելի՛ հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ ի Յիսուս Քրիստոս.

Ամէն տարի՝ Հոկտեմբերին երկրորդ շաբաթ օրը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին կը նշէ Սուրբ թարգմանիչ վարդապետներու՝ Մեսրոպ Մաշտոցի, Եղիշէի, Մովսէս Քերթոզի, Դաւիթ Անյաղթի, Գրիգոր Նարեկացիի եւ Ներսէս Շնորհալիի տօնը: Հինգերորդ դարուն Սուրբ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը, անչափ կարեւորելով Աստուծոյ խօսքը, հասարակ ժողովուրդին հասու դարձնելու գաղափարով, ձեռնամուխ եղան Հայոց տառերու ստեղծման: Աստուծոյ օրհնութեամբ պսակուեցաւ անոնց նախաձեռնութիւնը, Սուրբ Մեսրոպը աստուածակերտ տառերով վերադարձաւ Հայաստան: Այնուհետեւ Սուրբ Գիրքը թարգմանուեցաւ Հայերէնի: Վարդապետները ոչ միայն հասկցան Աստուածաշունչի թարգմանութեան գինը, այլեւ սուրբգրային մեկնութիւնները թարգմանեցին Հայերէնի՝ իրենց աշխատանքին միախառնելով իրենց երկնառաք աղերսները: Անոնք ո՛չ միայն թարգմանեցին, այլեւ իրենք եւս գրեցին մեկնութիւններ աստուածաշնչեան տարբեր գիրքերու վերաբերեալ, աղօթքներ, շարականներ, որոնք կը կազմեն աստուածաբանական գրականութեան մեր հարուստ ժառանգութեան մէկ մասը: Միայն յիշենք Սուրբ Գրիգոր Նարեկացիին «Մատեան Ողբերգութեան» աղօթամատեանը եւ Սուրբ Ներսէս Շնորհալիին «Հաւատով խոստովանիմ» աղօթքները, որոնք առ այսօր Քրիստոնեայ Հայու աղօթական կեանքի անբաժան մասն են:



Սիրելիներ,

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Հոկտեմբեր 6-ին կը տօնէր Քրիստոսի 72 աշակերտներու յիշատակութեան օրը, Հոկտեմբեր 20-ին՝ Սուրբ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս աւետարանիչներու յիշատակութիւնն է, Հոկտեմբեր 27-ին կը յիշատակուի տասներկու սուրբ վարդապետներու՝ Կիւրեղ Երուսաղէմացիի, Եփրեմ Ասորիի, Բարսեղ Կեսարացիի, Գրիգոր Նիւսացիի, Գրիգոր Աստուածաբանի, Յովհան Ոսկեբերանի, Եպիփան Կիպրացիի, Կիւրեղ Ալեքսանդրացիի եւ այլոց յիշատակութեան օրը: Մարդիկ, որոնց քերթուածներէն ճառագայթած է մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի լոյսը: Անոնք բոլորը Քրիստոսի խօսքը քարոզողներն ու տարածողներն էին ողջ աշխարհին: Թէ՛ բանաւոր եւ թէ՛ գրաւոր կերպով: Անոնք Աստուծոյ Աւետարանը հասու դարձուցին աշխարհի բոլոր ծագերուն: Ինչպէս սորվեցան իրենց Վարդապետէն, այնպէս ալ ուսուցանեցին բոլոր ազգերուն: Անոնք առաջիններն էին, որոնք աստուածային իմաստութեան եւ աւետարանական պատուիրաններու կրողները դարձան, ոչ միայն կրեցին իրենց մէջ այդ լոյսը, այլեւ փոխանցեցին թէ՛ իրենց ժամանակակիցներուն, թէ՛ հետագայ բոլոր սերունդներուն: Անոնց խօսքերը մեզի համար մեր կեանքի ճանապարհին լուսարձակներ են, որոնցմով առաջնորդուած՝ կ'ընթանանք դէպի մեր Երկնային Տէրը: Ինչպէս կ'ըսուի Առակաց գիրքին մէջ. «Իմաստութիւնը կը գովաբանուի ճանապարհներուն եւ բարձր ձայնով կը հռչակուի հրապարակներուն վրայ, կը քարոզուի պարիսպներու գլխէն, կ'ազդարարուի հզօրներու դռներուն առջեւ եւ համարձակ կը խօսուի քաղաքներու դարպասներուն մօտ» (Առակներ 1:20, 21):



Ո՛վ է այդ իմաստութիւնը՝ ի հարկէ, Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ Միածին Որդին: Այդ իմաստութիւնը ճանչնալ բոլորին հարկաւոր է: «Ճանչնալ իմաստութիւնն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը, ընկալել խօսքի բարդ դարձուածքները, հասկնալ ճշմարիտ արդարութիւնը եւ ուղղել իրաւունքը, պարզամիտներուն՝ խորագիտութիւն եւ երիտասարդներուն՝ միտք ու հանճար տալու համար, որպէսզի, անոնք լսելով, իմաստունը աւելի իմաստուն ըլլայ, իսկ հանճարեղը առաջնորդութիւն ստանայ, թափանցէ առակներու եւ ասոյթներու խորը, իմաստուններու ճառերուն եւ անոնց այլաբանութիւններուն մէջ» (Առակներ 1: 2-6):

Մենք ուղղակի աղքատ կ'ըլլանք մեր իմաստութեամբ, եթէ չառաջնորդուինք Քրիստոսով, եթէ մեր կեանքին մէջ Ան չդառնայ մեր իմաստութեան աղբիւրը, եթէ Ան մեզի ուղեկից չըլլայ մեր քայլերուն, քանի որ չարը որոգայթներ կը լարէ ամենուր եւ հեշտ է իյնալ մոլորութեան մէջ:

«Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, – կ'ըսուի թէ Աստուածաշունչին մէջ, – որ բարի հանճար է բոլոր անոնց համար, որոնք կ'առաջնորդուին անոր հետ» (Առակներ 1:7): Մեզի բոլորիս զգօնութիւն անհրաժեշտ է չնմանելու համար փարիսեցիներուն ու օրէնսգետներուն, որոնք, կը թուի, թէ օրէնսգետ էին եւ հասու Աստուածային ճշմարտութեան եւ պէտք է գովասանքի արժանանային Տիրոջ կողմէ, սակայն անոր փոխարէն՝ պարսաւանքի կ'արժանանային, քանի որ իրենց գործերով աստուածապաշտներ չէին, «անոնք ուզեցին աչքի զարնող զգեստներով պտղտիլ, հրապարակներուն վրայ յարգանքի ողջոյններ որոնել, ժողովարաններուն մէջ՝ առաջին աթոռները եւ ընթրիքներու ժամանակ՝ պատուոյ տեղերը» (Մարկոս 12:38,39): Այսինքն՝ մենք պէտք է իմաստուն ըլլանք, զուտ քարոզիչներ չդառնանք՝ սեփական վարքով հակասելով աստուածատուր պատուիրաններուն: Մենք բոլորս քարոզիչներ չենք կրնար ըլլալ, բայց կրնանք մեր գործերով վկայել մեր Քրիստոնեայ ըլլալը: Իւրաքանչիւր սիրով եղած գործ, ծառայութիւն, զոհաբերութիւն, նիւթական թէ հոգեբանական աջակցութիւն Քրիստոնեական հաւատքի քարոզչութիւն է: Իմաստուն խորհուրդը քարոզչութիւն է: Ուստի անհրաժեշտ է զգօն ըլլալ ամէն հարցին մէջ, որովհետեւ մենք կարիք ունինք մեր եկեղեցական հայրերու խրատներուն ու յորդորներուն, որոնք մեր իսկ փրկութեան, իմաստութեան, հոգեւոր յառաջընթացի համար կը գրուին եւ կ'ըսուին: Մենք կարիքն ունինք աստուածային խօսքը ճիշդ ըմբռնելու եւ ճիշդ կիրարկելու: Անոր համար մեր հայրերը ճիգ ու ջանք չեն խնայած մեզի լուսաւորելու, կրթելու, ուղղորդելու համար: Հետեւաբար մենք պարտաւոր ենք ճիշդ ընթանալու, որովհետեւ մենք ունինք հայրաբանական, մեկնողական հսկայական գրականութիւն, որ իսկապէս մեր իմաստութեան եւ փրկութեան համար է, որ, գործի վերածելով, կը փայլի մեր լոյսը մարդկանց առջեւ, որպէսզի անոնք տեսնեն մեր բարի գործերն ու փառաւորեն մեր Հօրը, որ երկինքն է (Մատթէոս 4:16): Աղօթենք Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետին հետ՝ խնդրելով Տիրոջմէ իմաստութիւն՝ ճիշդ որոշումներ կայացնելու, չարի առաջնորդութեան մեր միտքը չանձնելու, կեանքի ուղիներուն անսայթաք ընթանալու եւ աստուածային խորհուրդները գործի վերածելու համար:

Իմաստութիւն Հօր Յիսուս, Տո՛ւր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել, խօսել եւ գործել Առաջի Քո յամենայն ժամ, Ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց Փրկեա՛ զիս եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Շնորհք, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանսն. Ամէն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՈԹՔԸ

ԱՌԱԿՕՏԵԱՆ ԱՂՈԹՔ

Գոհութի՛ւն քեզի, ո՛վ ՏԵր, մեր Աստուածը, որ քու ողորմութեամբ մեզ արթնցուցիր մեր գիշերային հանգիստէն: Մեր միտքերը եւս արթնցուր, ՏԷ՛ր Աստուած, որպէսզի քեզի դառնալով՝ արդարութիւն գործեն, եւ մեր աչքերը տեսնեն քու փրկութիւնդ: Թող աստուածութիւնդ գայ եւ մեր մէջ բնակի, եւ ողորմութիւնդ հովանի եւ պահապան ըլլայ քեզի ծառայողներուն վրայ: Անոնց հետ՝ մեզ, քու ծառաներդ եւս արժանի ըրէ, որ գիշերցերէկ եւ ամէն ժամ քու պատուիրաններուդ սիրովը բռնուած՝ միշտ անոնց մասին խորհինք, եւ գոհութեամբ փառաւորենք քեզ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.

Ամէն:

Կենդանութիւն տուող զօրութիւնը եւ անմահութեան աղբիւրը Դուն ես, ով Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ շնորհեցիր մեզ գիշերուան մէջ եղնել եւ խոստովանիլ քու իրաւունքով եւ արդարութիւնով ըրած գործերուդ համար: Եւ հիմա կ'աղաչենք զքեզ ով ՏԵր Աստուած մեր, արթուն եւ պատրաստ ըրէ զմեզ քու սուրբերուդ հետ գոհութիւն տալով փառաւորել զքեզ Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ. հիմա եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:





PRIÈRE DU MATIN



**Nous te rendons grâce, ô Seigneur notre Dieu,
Toi qui nous as réveillé de notre sommeil
réparateur par la grâce de ta démenche. Eveille
nos esprits dans la droiture envers Toi,
Seigneur notre Dieu, pour que nos yeux voient
ton salut. Que ta divinité vienne et demeure en
nous; que la grâce de ton salut abrite et protège
tes serviteurs. Jour et nuit, et en tout temps,
fais de nous, tes serviteurs, le reflet de l'amour
de tes commandements, rendant grâce pour
glorifier le Père, le Fils et le Saint-Esprit,
maintenant et pour les siècles des siècles.
Amen.**

**Tu es le pouvoir qui donne la vie et la Source de
l'immortalité, ô Christ, notre Dieu et notre
Sueur. Tu nous as fait la grâce de nous lever
au milieu de la nuit et de confesser nos fautes
contre les commandements et contre la vertu.
Et maintenant nous Te le demandons, Seigneur
notre Dieu, rends-nous vigilants et prêts à Te
servir avec les saints, à l'aube de ce jour pour
que, Te rendant grâces avec eux, nous Te
glorifions avec le Père et le Saint Esprit,
maintenant et toujours et pour l'éternité de
l'éternité. Amen.**





Եկեղեցական Տոնացոյց Յառաջիկայ Շաբթուան
Feast de l'église pour la Semaine Prochaine

Յոկտեմբեր – Octobre

8, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Փոկասու Հայրապետին
եւ Երանոսի Յետեւողին Առաքելոց:

**Lundi 8 – Fête du Saint patriarche Phocas
et de Yeros, disciple des apôtres.**

9, Երեքշաբթի - Տօն Սրբոցն Կուսանացն Թեկի,
Վառվարեայ եւ Պեղիգեայ:

Mardi 9 - Fête des Stes Vierges Thégra, Varvara et Pélika.

10, Չորեքշաբթի – Պահք:

Mercredi 10 - Jeûne.

11, Յինգշաբթի - Տօն Սրբոցն Պանդալեոնի բժշկին,
Երմողեայ Բահանային եւ Եպրագսեայ կուսին:

**Jeudi 11 - Fête du médecin Saint Pantaléon,
du prêtre Ermole et de la vierge Ebraksie.**

12, Ուրբաթ - Պահք:

Vendredi 12 - Jeûne.

13, Շաբաթ – Տօն Սրբոց ԹԱՐԳՄԱՆՉԱՅ:

Վարդապետացն մերոց՝

Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային,
Գրիգորի Նարեկացուն եւ Ներսիսի Կլայեցուն
Տօն ազգային եւ եկեղեցական՝

Ի յիշատակ գիւտի նշանագրաց Յայոց եւ թարգմանութեան Սուրբ Գրոց:

**Samedi 13 – Fête de nos Saints Docteurs-Traducteurs,
Mesrob, Yéghishé, Moise le Poète, le philosophe David l'Invincible,
Grégoire de Nareg et Nersès de Glah.**

ՏՈՆԵՐ

Շաբաթ, 6 Յուլիտեմբեր 2018

Քրիստոսի 72 Աշակերտներու Յիշատակութեան Օր

Բացի 12 առաքեալներէն Յիսուս ուներ նաեւ՝ 72 աշակերտ, որոնց Տերը ուղարկեց Բարի Լուրը քարոզելու բոլոր ազգերուն:

Ցաւօք, Աւետարանին մէջ նշուած չեն այդ աշակերտներուն անունները: Աւետարաններուն մէջ «աշակերտ» բառը ընդհանրապէս կը գործածուի Քրիստոսի բոլոր հետեւորդներուն համար: Յիսուս Քրիստոս իր առաքեալներուն եւ աշակերտներուն «իբրեւ գառնուկներ գայլերու մէջ»՝

երկու-երկու ուղարկեց՝ քարոզելու Աստուծոյ Արքայութիւնը՝ ըսելով. «Ով որ կը լսէ ձեզի, ինծի կը լսէ, եւ ով որ ձեզի կը մերժէ, ինծի կը մերժէ» (Ղուկաս 10:16): Առաքեալներու եւ աշակերտներու միջեւ գրեթէ տարբերութիւններ չկան, անոնք ունին նոյն իշխանութիւնը եւ առաքելութիւնը (Ղուկաս 10:9, 9:1), սակայն բոլոր աշակերտներուն անունները, Բեթղեհեմի սուրբ մանուկներու նման, միայն Աստուծոյն յայտնի են՝ գրուած երկինքի արքայութեան սրբազան գիրքին մէջ:


Հայ Առաքելական եկեղեցին Քրիստոսի աշակերտներու յիշատակութեան օրը կը տօնէ Վարազայ Խաչին յաջորդող շաբաթ օրը:




Երկուշաբթի, 8 Հոկտեմբեր, 2018

Ս. Փոկաս Հայրապետի Եւ Առաքեալներուն Հետեւող Երանոսի Յիշատակութեան Օր

Ս. Փոկաս հայրապետը սել ծովի Սինոպ քաղաքի եպիսկոպոսն էր: Ան ապրած է Պափլագոնիա քաղաքին մէջ՝ զբաղուած այգեգործութեամբ: Իր տան դռները բաց էին պանդուխտներու, օտարներու, աղքատներու ու կարօտեալներու առջեւ: Դեռ մանուկ հասակէն Աստուծոյ շնորհը ստացած էր եւ բազմաթիւ հրաշագործութիւններ կատարած: Վարքագրական աղբիւրներու համաձայն՝ դէւերուն կը հալածէր, կոյրերուն՝ բուժում կը պարգեւէր, իր ունեցուածքն ալ աղքատներուն կը բաշխէր: Եպիսկոպոսութեան շրջանին մեղադրուած է Քրիստոնէայ ըլլալուն համար, իսկ Տրայանոս կայսրի զինուորները հրաման ստացած են սպաննել զինք, ուր ալ որ հանդիպին իրեն: Այսպէս, Ս.



Փոկասը իր տունը ընդունած է զինուորներուն, հիւրասիրած անոնց, ապա ան ըսած է, որ ինքն է փնտռուող անձը: Թէեւ զինուորները գոհ մնացած էին անոր հիւրասիրութենէն, բազմիցս յորդորած էին Փոկասին ետ կանգնիլ իր հաւատքէն, սակայն Փոկասը չուրացաւ Քրիստոսին եւ սրախողխող ըլլալով՝ նահատակուած է 117 թուականին:



Ս. Երանոսը (Լիոնի Իրենիոս եպիսկոպոսը) ծնած է Եգեականի շրջանին մէջ՝ աշակերտելով Ս. Պօղոսկարպոս Չմիւռնացի հայրապետին: Ուսում ստացած է Հռոմի մէջ, ապա երեց ձեռնադրուած: 117 թուականին, Լիոնի եպիսկոպոսի նահատակութենէն ետք, ան յաջորդած է անոր տիրանալով նոյն Աթոռին:

Ս. Երանոսը արեւմուտքի առաջին մեծ աստուածաբանն է, ան Եկեղեցւոյ հայրերը համարած է առաքելական հայրերու գործին շարունակողները: Ըստ «Հայսմավուրք»-ի՝ Սեպտիմոս Սեւերոսի օրով, ան դատաւորներու մօտ համարձակ կերպով վկայած է

Քրիստոսի մասին, եւ յանուն Անոր համար ան չարչարուած եւ նահատակուած է 202 թուականին: Ան գրած է նշանաւոր «Ընդդէմ հերձուածողաց» արժէքաւոր աշխատութիւնը:

Holidays

Thursday, October 4, 2018

Commemoration of Princes St. Sahak and Hamazasp Artsrounie

St. Sahak and St. Hamazasp were from the Artsrounie noble dynasty and ruled in Vaspourakan region of Armenia in the period when the Arabic authorities had escalated persecutions against Christians. In 785 A. D. a new governor is appointed in Armenia. The princes and their youngest brother - Meroujan, pay a due visit to the newly appointed governor. Blaming them in rebellion, the governor imprisons the princes and threatening them with tortures, demands to give up any relations with the Greeks and the Christian faith. Being afraid of tortures, Meroujan adopts the Muslim faith. However, on his way back to homeland he is beheaded by Davit Mamikonian, the locum tenens of Hamazasp, as a betrayer. Meanwhile, Sahak and Hamazasp endure the tortures for the sake of Christ's faith with prayers and silently. Executioners behead first the younger brother Sahak and then - Hamazasp, and burn their remains.



Saturday, October 6, 2018

Commemoration of Christ's seventy-two Disciples

Besides the 12 Apostles, Jesus also had 72 disciples, whom he sent to "preach the Good News to all nations". Unfortunately, those disciples' names are not mentioned in the Gospels. In the New Testament the word "disciple" is used of the followers of the Jesus Christ. Christ sent out his apostles and disciples "like lambs among wolves" two by two, to go ahead of him to every town and place where he himself was about to go, saying them: "Whoever listens to you listens to me; whoever rejects you




rejects me; and whoever rejects me rejects the one who sent me..." (The Gospel according to Luke 10:16). There are hardly any differences between the 12 apostles and the 72 disciples, they have the same power and authority and the same mission (The Gospel according to Luke 10:9; 9:1). However, the names of all 72 disciples, like the names of the 40 innocent children martyred in Bethlehem, are known to God only and are written in the sacred book of the Heavenly Kingdom.

Monday, October 8, 2018

Commemoration of Pontiff St. Pokas and St. Yeranos

Pontiff St. Pokas (Phocas) was the Bishop of the town Sinop located on the shore of the Black Sea. He lived in the town Paphlagonia and was a gardener. His doors were always open before the foreigners, the poor and the needy. Since childhood he was granted divine grace and worked many wonders. According to hagiographic sources he drove away the demons, recovered the eyesight of the blind, and shared his property with the poor. When he already was the Bishop of Sinop, he is persecuted for being Christian. The soldiers of the King Trajan are ordered to kill Pokas wherever they meet him. St. Pokas receives the soldiers in his house, entertains them to dinner, and then tells the soldiers that he is the person whom they are seeking. The soldiers, who were pleased with the hospitality and the attitude of St Pokas, persuade Pokas to betray his faith. However, Pokas does not betray Christ and is martyred in 117 A. D.



St. Yeranos (Bishop Irenios (Irenaeus) of Lyons) was born in Aegean Sea region. His teacher was the Pontiff St. Polikarpos of Smyrnia. St. Yeranos has studied in Rome, and then was ordained as a priest. After the martyrdom of the Bishop of Lyon St. Yeranos has succeeded him.

St. Yeranos is the first great theologian of the East and he is the last link binding the Apostolic Fathers with the Church Fathers of the next centuries. The Armenian Haysmavourk testifies that during the reign of Septimos Severos, St. Yeranos has courageously spoken before the judges about Christ, for which he has been subjected to torments and has been martyred in 202 A. D. He is the author of the famous valuable work: "Against Schismatics".





ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 7 Հոկտեմբեր 2018

Գանատահայոց Թեմիս Առաջնորդ՝
Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի
թելադրանքով եւ յանձնարարութեամբ,
յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին
պիտի մատուցուի

մասնաւոր Հոգեհանգստեան Պաշտօն
Չուիցերիոյ Մօտ ՀՀ-ի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան
Ազգային Հերոս, Համայն Հայութեան Կողմէ Սիրուած,
Աշխարհահռչակ Երգիչ՝

Հանգուցեալ

ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ

Մահուան տխուր առիթով

Սիրով կը հրաւիրենք Մոնթրէալի համայն Հայութիւնը միասնաբար
աղօթելու այս աննման ու մեծ Հայուն հոգիին լուսաւորութեան համար:
Սկիզբ Ս. Պատարագի – առաւօտեան ժամը 10:30-ին
Հոգեհանգստեան պաշտօն - ժամը 12:00-ին
Յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ
հիւրասիրութիւն
Եկեղեցւոյ «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

**A l'occasion du décès et en hommage
à Son Excellence
Charles AZNAVOUR,**

**Ambassadeur et Représentant permanent de la République d'Arménie
en Suisse, héros national, artiste mondialement connu et aimé
une Messe de Requiem sera célébrée à l'issue
de la Sainte Messe, le Dimanche 7 octobre 2018**

A la Cathédrale de Saint Grégoire l'Illuminateur de Montréal.

Début de la Sainte Messe 10h30 Messe de Requiem 12h00

**Nous invitons tous nos fidèles à assister à cette Messe et à prier pour
le repos de l'âme de ce grand et noble arménien.**


Une réception aura lieu à l'issue de la Messe dans la salle de l'église.



**Տիկ. Մարկո Աղազարեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝**

**ՆՈՒՊԱՐ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ
(NOUBAR AGHAZARIAN)**

Մահուան 4-րդ տարելիցին առիթով



ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՆ ԵԿԵՂԵՅԻՆՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of September/October 2018
have been received with great appreciation*



CHURCH:

**Mr. Arto Manoukian \$100,
Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$25
“GOMIDAS” CHOIR 60th ANNIVERSARY:
Mr. & Mrs. Nurhan & Hasmik Cankul \$250,
Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan,
Mr. & Mrs. Martn & Sossie Marasliyan \$100**

HOKEHANKISD:

**THE LATE SONIA SARAFIAN-FATTAL:
Mr. & Mrs. Alexandre & Nora Abouchar \$200**





Website:
www.saintgregory.ca



Սիրելի հաւատացեալներ,

Չաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել
Եկեղեցւոյ **Կայքէջը - Website www.saintgregory.ca,**

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու
վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ
Նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընծեռուած այլ
կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Dear Parishioners,

We are glad to inform you our Church's newly developed

Website: www.saintgregory.ca,

*where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations and
benefiting from other possibilities of our Website.*

Thank you for support!

Parish Council
Ծիսական Խորհուրդ



Յառաջիկայ Ձեռնարկներ

**Տարեկան Պագար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ
28, 2018**

**«Կոմիտաս» Դպրաց Դասի Հիմնադրութեան 60-Ամեակի
Տօնակատարութիւն –
Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018 երեկոյեան ժամը 8-ին «Մարի
Մանուկեան» սրահին մէջ:**

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

**Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ –
Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018**

UPCOMING EVENTS

**Annual Bazaar – Saturday & Sunday -
October 27 & 28, 2018**

**“Gomidas” Choir the 60th Anniversary Celebration –
Saturday, November 10, 2018 at 8:00 pm
in the Church “Marie Manoogian” hall.**

**Children’s Christmas /CFFA –
Sunday, December 2nd, 2018**

**Church 48th Anniversary –
Sunday, December 9th, 2018**



**Ուշադրութիւն
մեր սիրելի
հաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի
կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները
փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066,
մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Ծիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

**If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.**

Thank you for your cooperation.

Parish Council



**Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ
2018 Տարեշրջանի Տօնացոյց**

Ամիս	Օր	Չեռնարկ
Յուլիտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պազար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Առնիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ա. Ճնուկի Եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Մայր Եկեղեցւոյ Օճման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Ս. Գրիգոր Լուսավորիչ
Մանկական Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

**Փորձերը պիտի կատարուին Կիրակի օրերը
Վերսկաման թուականը կը հաղորենք մօտ առենին:**

La nouvelle saison débutera

**La date du commencement des pratiques vous sera
communiquée prochainement.**

**Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:**

**Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.**

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/

Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -12 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-12 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Վերսկսման թուականը կը հաղորդենք մօտ օրէն:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ
գրասենեակ (514) 279-3066
Տէր Դաւիթ Զինյ. Մարգարեան



In a pleasant and friendly atmosphere, the children will learn:

- *Psalms & songs*
- *Armenian language skills*
- *Interesting stories & entertainments*
- *Fun & fascinating consecutive Fieldtrips*

Restart date will be announced shortly.
For more information and registration call to the Church office
(514) 279-3066
Fr. David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



«Կոմիտաս» Դպրաց Դասի
 Հիմնադրության 60-ամեակի
 Տոնակատարություն
 “Gomidass” Choir the 60th
 Anniversary Celebration



Հովանաւորութեամբ՝
 ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
 ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ

Under the Auspices
BISHOP ABGAR HOVAGIMYAN

Կազմակերպութեամբ՝ / «ԿՈՄԻՏԱՍ» ԴՊՐԱՅ ԴԱՍԻ
Organized by: / “GOMIDAS” CHOIR



Մասնակցութեամբ՝ Հանրածանօթ Երգիչ
ՄԱՐԹԵՆ ԵՐԳԱՆՏԻ
 ԵՒ DJ SAKO-ի



With Participation: Famous Singer
MARTEN YORGANTZ & DJ SAKO

Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018 երեկոյեան ժամը
 8-ին, Եկեղեցւոյ
 «Մարի Մանուկեան» սրահին մէջ:
 Saturday, November 10, 2018 at 8:00 pm
 in the Church “Marie Manoogian” hall.

Ճաշերու Պատրաստութեամբ՝
 «Տիկնանց Յանձնախումբ»-ին

Supper Preparation: by “Ladies Committee”

Տոմսերու եւ տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել.

For reservation please call:

- Մարալ Պօղոսեանին/ Maral Boghossian (514) 279-3066
- Արա Կերիքեանին/ Ara Gerikyan (450) 682-5565 կամ / or
 (514) 947-4524 կ.ե. ժամը 5-էն ետք / After 5 pm

Սուտքի Նուէր \ Donation \$50

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
 Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

***BIBLE STUDY & INTERESTING
DISCUSSIONS***

BY FR. DAVID MARGARYAN

**Տեղի պիտի ունենայ ամեն Հինգշաբթի
երեկոյեան՝ ժամը 7-ԷՆ սկսեալ Եկեղեցւոյ մէջ:**

**Every Thursday Starting at 7:00 pm
in the Church.**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու**

**Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝
Ներկայացուցած Աստուածաշնչական
Նիւթերուն:**

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

**We invite all our beloved faithful to be present
to the bible sessions with spectacular biblical
subjects that will be presented
by Fr. David Margaryan.**

**Coffee and tea will be served
during the sessions.**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
Ներկայութիւնը:**

**Cordially we expect everyone's
presence.**

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպությունը՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱՉԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Արմինե Շիրինեան

Շաբաթ 27 եւ Կիրակի 28 Հոկտեմբեր 2018
Ժամը 10:00-էն

Չեռային աշխատանքներ
Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 քիւի



Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ճիսական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը,

Երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական հանդիպում մը ունենալու

Ճիսական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

**Շնորհակալութեամբ՝
Ճիսական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**